ՍԱՀԱԿԵԱՆՑ, ՍԱՀԱԿ քահանայ։ – «Դասագիրք կրօնի» Ա. Բ. Գ. տարիներ։ Թիֆլիս, տպարան Մ. Նարաձէի։ Ա. գիրք 36 էջ։ Բ. – 36, Գ. 68 էջ։ Դիւն է առաջին տեարի 30 կոպ., երկրորդի – 20 կ., երրորդի – 30 կոպէկ։

Ով ընթերցողներից ճանաչում է բարեկրօն քահանայ Սահակ Սահակեանցի հին երկասիրութիւնները, նա անշուշտ կարող է երևակայել թէ այս վերջին գրքերն էլ ինչպիսի աշխատութիւններ են։ Օթէ մեր մէջ կը գտնենք մի քանի անխոնջ աշխատողներ մանկավարժական աշխարհում, անշուշտ նոցա շարքում ևս պէտք է դնենք մեր բարեկրօն քահանային։ Նա նվիրել է իրան մեր աղքատիկ գրականութեան և դիմանալով ամեն խոչնդոտի, արդելքների՝ կամաց-կամաց, սակայն ամուր քայլերով երևան է դալիս իւր գեղեցիկ երկերով դասագրքերով։ Նախ քան մենք այդ վերջիններին մասին խոսենք, նվիրենք մի քանի խոսք նորա հին աշխատութիւններին։ Հին աշխատութիւնների մէջ տիրում է կատարեալ հերբարտական ոգին։ Մենք գտնում ենք ամենեղ նիւթերի մշակումն հինգ աստիճաններով, մենք գտնում ենք ամենեղ այն նոր մանկավարժական սկզբունքները, որ մինչև այսօր մեր աղքատ գրականութիւնը չի տեսել։ Մի խոսքով առաջին անգամ երևան է դալիս մեր մէջ կրօնի մի սիստեմական դասաւանդութիւն, գործադրութիւն այն դաղափարների, որ յատուկ է միայն գիտական մանկավարժութեան, որի հիմնադիրն է Հերբարտը։ Ով Սահակեանի հին աշխատութիւնների հետ ծանօթ չէ, նա ոչ մի ժամանակ չի կարող այս նոր տեարները գնահատել, ըստ որում դոքա իրար հետ սերտ կապած են։ Այդ դասատեարների կարևորութիւնը ցոյց տալու համար նա իւր մի դասագրքի մէջ ասում է. «Աշակերտաց ձեռքն որբազան պատմութեան մի առանձին դասագիրք տալն աւելորդ է. ամենաընտիր և նպատակաւորմամբ դասագիրքը հէնց Սուրբ Գիրքը՝ բնագիրն է»։ Բայց որովհետև պակասում են մեր մէջ դիւրըմբռնելի և արժանագին բնագրեր, ուստի նա ձեռնարկում է այս դասատեարների կազմութեան, որոնք, իսկ է, բառիս բուն մտքով ասած ինքնուրոյն չեն, ըստ որում նոքա կազմում են այն, ինչ նիւթերի մշակման մէջ «functia» է կոչւում։ Դասաւանդութեան նպատակն է, որ այդ գիտութիւնը չը մնայ առանց գործադրութեան, չը դառնայ մի անմատչելի հարստութիւն, այլ գործադրվի, այսինքն գիտենալն իմանալու փոխադրվի։ Առաջին գրքերը ծառայում են գիտենալուն, իսկ նոր լոյս տեսած դասատեարներն – իմանալուն։ Եթէ աշակերտները նիւթը արդէն սովորել են, իւրացրել են, ապա պէտք է այս գրքերը նոցա ձեռքը տալ, որ այդ սովորածը, ուսածը աւելի ամրանալ

նոցա հոգու մէջ։ Իսկ հարցը նորա մէջն է թէ արդեօք այդ գրքերը արժանի ծառայութիւն կը մատուցանեն գիտնականաց։ Մենք դորան կը պատասխանենք, որ սոքա կազմուած են օրինակելի կերպիւ, լեզուն սահուն, պարզ և հասկանալի է. իսկ պատմութիւնները տուած են այնպիսի ձեւով, որ կարող են աշակերտի մէջ անմիջական հետաքրքրութիւն (unmittelbares Interesse) յառաջացնել։ Մեզ աւելի ոչինչ չէ հարկաւոր։

Վերջացնելով իմ երկու խօսքս բարեկրօն քահանայ Սահակեանցի դասատուութիւնների մասին, աւելորդ չեմ համարում հետեւեալն աւելացնել. տալ Աստուած, որ Ս. Գ. Ս. այս մեզ համար կարեւոր կրօնուսուցման վերանորոգիչ գործիքիչ նոյն եռանդը պահպանէ ինչպէս հիմա և իւր սկսած կարեւոր գործը անկատար չը թողնէ։ Նորա երկասիրութիւններն ունին արդէն մեր ազգային գրականութեան պատմութեան մէջ յարգելի տեղ և միշտ վերանորոգիչ ազդեցութիւն կ'ունենան մեր կրօնուսուցիչների դասատուութեանց վերայ։

Բ.

P. S. Ցաւելով կարդում եմ «Արարատ» ամսագրի մէջ, որ Էջմիածնի ուսումնական-վարչական յանձնաժողովը իւր իրաւունքը չի համարել նոր դասագրքեր թուլատրել մինչև կաթողիկոսի գալը։ Առանց ինձ իրաւունք համարելու մտնել իրաւաբանական խնդիրների մէջ՝ լոկ մանկավարժական տեսակէտից պէտք է խորին ցաւս յայտնեմ, որ Տէր Տեղակալի իրաւունքի ապպիսի ըմբռնումով մեր ուսումնարանները առ նուազն մէկ տարի պէտք է զրկուեն այսպիսի պատուական ձեռնարկների օժանդակութիւնից, ինչպիսին են վերը գրախօսած դասատետրերը։

Բ.

ՄՈՇՈՒԵԱՆՑ, ՊԵՏՐՈՍ։—«Բանաստեղծութիւններ»։ Աղէքսանդրապոլ. տպարան Աբրահամ Մալխասեանցի, 1892 թ., 68 երես, գինն է 25 կոպէկ։

Այս գրքի մասին ստիպում է խօսել ոչ թէ արժանիքը, այլ այն հանգամանքը, որ լուսթիւնը կը խաբէ հեղինակին և նա, իրան շարունակ բանաստեղծ համարելով, իզուր և նոյն իսկ վնասակար աշխատանք կ'անի գրականութեան համար։ Մանաւանդ բանաստեղծի հռչակ ունենալու ցանկութեամբ հիւանդացած է մեր երիտասարդների մի նշանաւոր մասը, որոնք, չնչին բացառութեամբ, նոյնքան զուրկ են բանաստեղծական բնատուր շնորհից, որքան և պ. Մոշուեանը։

Սրանց սրտումը բանաստեղծական կրակի տեղ մի ճճի կայ, որ անհանգիստ է անում, ստիպում է մի գործ կատարել մի փառք